ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ ԲԷԹԼԷՀԵՄԻ

ԱԶԳԱՑՆՈՑ ՎԵՐԱՑ

1623 թուին. Պարոն Տէր Գրիգոր Երուսաղէմի Հայոց պատրիարքի օրովը, Յոյնք տիրապետութեան տէնչանաք խնդիր կը յարուցանեն թէ, քանի որ Հայք Բեթլէհէմի մէջ ժողովուրդ չունին, պէտք է որ ձեռնթափ լինին Ծընընդեան սուրբ Տեղիքներէն, և նոյն իսկ Բեթլէհէմի մեր վանուց մէջ Եկեղեցոյ շինութեան արգելք ըլլալ կ'ուզեն։

Իրաց այս պարագաները կ'ըստիպեն զՊարոն Տէր Պատրիարքն, որ Երուսաղէմի սուրբ Յակոբայ վանուց քրձաղգեաց միաբաներէն Մուշեղի Յակոբը 'ի Բեթլէհէմ առաքելով կ'ամուսնայ ընէ Լատին օրիորդի մի հետ, հան նոյա բնակութեան տեղի հաստատելով անոնց ամէն պէտքերը կը հոգայ։ Եւ անոնցմէ կը սերեն Բեթլէհէմի Հայ ժողովուրդը, որոց թիւը այսօր հարիւրէն աւելի է։

Յիշեալ Յակոբն կը ծնանի զՆերսէսը Ներսէս կը ծնանի զՅակոբն, Միսրիմն, Մովսէսն և Աբրահամը։ Աբրահամն չամուսնացած վատուքի ըսուած գիւղի մէջ կըմբռնի վիրաւորուելով երկու գիւղի իրարու հետ պատերազմած ժամանակ։

Ներսիսի անդրանիկ որդի Յակոբն կը ծնանի զԳէորգը, Յովսէփը, Դաւիթը, Գրիգորը և Եղիան։

Ներսիսի երկրորդ որդի Միսրին կը ծնանի զԱբրահամը։

Ներսիսի երրորդ որդի Գրիգորն կը ծնանի զԽալիլը։

Ներսիսի չորրորդ որդի Մովսէսն կը ծնանի զԵղեայն և զՅովհաննէսը։

Յակոբի անդրանիկ որդի Գէորգն կը ծնանի զՅակոբ, Սողոմոն, Ներսէսն, և Սալէհ (արդար) և երկու դուստրը Հիլուէ (անուշ) և Մարիամ։

Յակոբի երկրորդ որդի Յովսէփն կը ծնանի, զՄարկոս։

Յակոբի երրորդ որդի Դաւիթն կը ծնանի զՅովհաննէսը, Աբրահամը, Եղիայ և հինգ դուստր Սուլթանը, Աղիզէ, Վարտէ, Միլատէը (ծնունդ), Հիլուէ։

Յակոբի չորրորդ որդի Գրիգոր կը ծնանի զՅովհաննէս եւ մի դուստր Կաթմայ անուամբ։

Յակոբի հինգերորդ որդի Եղիան կը ծնանի զԱբրահամ և զԳէորգ։

Միքրիյի որդի Աբրահամն կը ծընանի զՅովսէփ, զՄովսէս, զԳէորգն, զՅակոբն, զԽալիլ, զՄիքրին, և երկու աղջիկ Հիլուէ և Վարդէ։

Գրիգորի որդի Խալիլն կը ծնանի զՅակոբ, Յովհաննէս և երկու դուստրը Վարտէ և Աղիզէ։

Մովսէսի որդի Եղիան կը ծնանի ըզ Սէլիմ։

Մովսիսի երկրորդ որդի Յովհաննէսն կը ծնանի զԳէորգ և Մովսէս և երեք դուստր զՎարտէ, Մարիամ ու Հիլուէ։

Գէորգի որդի անդրանիկն Յակոբ կը ծնանի զԳրիգոր և զԱնտոն։

Գէորգի երկրորդ որդի Սողոմոն կը ծնանի զԱւետիսը, Սահակը, եւ երկու դուստր Նէճմէ (Աստղ) եւ Սառայ։

Գէորգի երրորդ որդի Ներսէսն կը ծնանի զԱստուածատուր եւ չորս դուստր Նէճմէ, Հիլուէ, Վարտէ և Մարիամ։

Գէորգի չորրորդ որդի սալէհն կը ծնանի զԱստուածատուր, զԳէորգը, զՅակոբ, և մի դուստր զԻլանէ։

Յովսէփի որդի Մարկոսն կը ծնա-

digitised by A.R.A.R.@

նի զԴէորգ և դուստր մի Հիլուէ։

Դաւթի որդի Յովհաննէսն կը ծնանի զԴէորգ և Յակոբ։

Դաւթի երկրորդ որդի Աբրահամն կը ծնանի դուստր մի Մարիամ։

Դաւթի երրորդ որդին Եղիսան տակաւին անզաւակ է։

Գրիգորի որդի Յովհաննէսն կը ծնանի զԱբրահամ, Դէորգ, զՅակոբ, և երկու դուստր։

Եղիայի որդիք Աբրահամ և Յովհաննէսն կը ծնանին զաւակունս Յեգիպտոս։

Աբրահամու որդի Միքրին կը ծնանի զԴէորգ։

Աբրահամի երկրորդ որդի Յովսէփն կը ծնանի հինգ դուստրն զԱվիզէ, Սառայ, Հաննէ, Նիճմէ և Հիլուէ։

Աբրահամի երրորդ որդի Մովսէսն կը ծնանի զԱբրահամ, Սալէհ, Սաղամոն, Մարկոս և չորս դուստր Հիլուէ, Մարիամ, Վարտէ և Սառայ։

Աբրահամի չորրորդ որդի Գրիգորը կը ծնանի զՀապիպը, Սէլէմէ, Սղոմանը և Գրիգորը, և մի դուստր Ֆարհէ։

Աբրահամի հինգերորդ որդի Յակոբն կը ծնանի զԵղիսայն, Սալէհը, Խալիլը, և չորս դուստր՝ Ցիլանէն, Նուսրան, Վարտէ և Հելուամ։

Աբրահամի վեցերորդ որդի Խալիլն կը ծնանի զԱւետիսը, Սալէհը, և մի դուստր Մարիամ անուամբ։

Եղիսայի որդի Սէլիմը կը ծնանի զԱստուածատուրը։

Յովհաննէսի որդի Գէորգն կը ծնանի զԱստուածատուրը, Սէլէմէն և զՍէյիտ։

Յակոբի որդի Գրիգորն կը ծնանի զՅակոբ։

Յակոբի երկրորդ որդի Անտոնն անզաւակ է։

Սղոմանի որդի Աւետան կը ծնանի զՅեղոմ և Աննայ դուստրն։

Սղոմանի երկրորդ որդի Սահակն տակաւին անզաւակ է։

Ներսէսի որդի Աստուածատուրն տակաւին անզաւակ է։

Սալէհի որդիներն անզաւակ են և յիշեալ անզաւակներն նոր ամուսնացած են։

Սէլիմի որդի Աստուածատուրն կը ծնանի զՅակոբ։

Յովհաննէսի որդի Աստուածատուրն կը ծնանի զՄարիամ։

Սոյս կենդանիներուն թիւը 103ի կը հասնի։

Բայց 'ի այս ժողովուրդէն 12 Հայ բնակիչ ևս ունիմք 'ի Բեթլեհէմ, որք ժամանակին Քէրակէն գաղտած են։

Այն ժողովրդեան տակաւաթիւ լինիլն, որ մեծ զժուարութիւն յարուցած էր, ամուսնանալ ուզողներու մէջ տեղը, վերջին ժամանակներս հանգուցեալ Յովհաննէս Սրբազան Պատրիարքն, եթէ ոչ աշխարհի առաջին մարդոյն խոսուռ հետեւելու, գոնէ տակաւինչ մեռնելով. ճիւղահամարութիւնը երեքի իջեցոյց, որով քիչ մը դիւրութիւն եղաւ մեր տակաւաթիւ Հայ ժողովրդեան (օտար ազգաց աղջկունք իրեն հարսնութեան չառնելով), իրենց մերձակաները իրեն հարսնութեան առնելով։

Թէև Բեթլեհէմի մէջ անխտիր ամէն Քրիստոնեայ ազգերն իրարու հետ խնամութիւն կ'ընեն, բայց Լատինք և Յոյնք միշտ կը զգուշացուցեն իրենց ժողովուրդը, որ օտար ազգաց աղջիկ չի տան։

digitised by A.R.A.R.@

Նաև բաց տեղւոյն սովորութեանց հարանախօսութեան դրամական դաշինքը Պօլսոյ Թրակիայի հակառակն է, փոխ ունակ ազգկան ծնողներէն պահանջելու, իրենք 20 ռակիէն մինչև 100 ռակի կը վճարեն ազգկան ծնողաց. մանաւանդ ազգկան մերձակայ ազգականաց ամենուն ալ բաց արժանաւոր մէկ մէկ ընծայ կը տրուի տղայի կողմէն, և սորը բուն պատճառն ալ տղայոց, շատ ծնողին և ազգկանց սակաւ լինելն է։

Բեթլեհէմի ժողովրդոց միութիւնն ազգայինէն աւելի թաղային է, մինչև իսկ Եկեղեցական խառնութեանց մէջ, ինչպէս որ շատ անգամ պատահած է Հայոց թաղերու մէջ բնակող Յոյներն և Լատիններն Հայոց ժողովրդեան հետ միանալով, Յոյն և Լատին ժողովրդին դէմ զինեալ են։

Այս օրինակին կը հետեւին Բեթլեհէմի ամէն Քրիստոնեայ ազգերն։

Բեթլեհէմի Քրիստոնեայ ննջեցելոց յուղարկաւորութեան ժամանակը Եկեղեցական հանդիսի հետ կը խառնուի, նաև կանանց հանդէսն, որք նընջեցելոյն ձիրքիրը եղանակաւոր բարձր ձայնով մը երգելով դագաղի եռեւէն կ'երթան. և մեռնողի շատ մերձակայ կանայք խստա գլխի բաց կ'երթան։

Մեռնողի ամենասիրելի զգեստները հետն կը թաղեն. միայն թէ Բեթլեհէմն, Երուսաղէմի սահմաններու ուրիշ քաղաքաց սովորութեան չի հետեւիր, նոր թաղուած ննջեցելոյն վրայ վրան յօրինելով երեք օր կրօպասեն և իրենց ծանօթ ազգականն և բարեկամներն երեկոյ և առաւօտ գնալով վրանի տակը սուրջ կը խմեն։ Բեթլեհէմի կանայք ութ օր շարունակ ննջեցելոյն գերեզմանի վրայ երթալով, երգեր յօրինելով ողբաձայն կը երգեն դարձեալ մերձականներն գլուխն բաց կ'երթան։

Այս արարողութիւնը քառասուն օէն վերջն եւս կը կատարեն։

Նաև Բեթլեհէմցիները ինչպէս որ Պաղեստինայ շատ տեղերը ննջեցելոյն ամենէն ընտիրը և իրեն սիրելի հագուստները իրեն հետ կը թաղեն, այս առթիւ ուրիշ տեղերը վրան կը յօրինին գերեզմանի վրայ և երեք օր կը սպասեն։ Նաև տեղւոյն ժողովուրդն ամեն երեկոյ և առաւօտ գերեզմաննոցը դիմելով վրանի տակը սուրջ կը խմեն։ Այս սովորութիւններն առանց բացառութեան են։ Որ և է քրիստոնեայք և մահմեդականք անխտիր 'ի գործ կը դնեն։

Խորէն Վրդ. Պէրպէրեան
Մէյրիրէն։

ԿԻՒՐԻՆ

Կիւրինցի ազգայնոց վերայ խիստ ուրախական տեղեկութիւններ կը ընդունինք։ Գովանի փափաքանք կ'աշխատին իրենց զաւակաց կրթութեան համար։ Թէեւ ունին դպրոց, բայց անպարմանութիւնն եւ անձկութիւնն զգալով, հանգանակութիւն բանալով իրենց մէջ և վեց հարիւր ռակիէն աւելի դրամ հաւաքելով՝ հիմնարկած են նոր դպրոց կառուցանելու երկաթ աշակերտելոց համար։

Շատ ազքատասէր են և կարեկից և կարօտ ընտանիքներուն արագ արագ օգնութեան կը հասնին։ Այս տարի քանի մի ամսուան մէջ, բաց 'ի ազքատաց բաժնած ցորենէն, ալիւրէն, միսէն և այլ պիտոյքներէն, 120 ռակիէն աւելի դրամ եւս բաշխած են, երկրի սովատանջներն մահուանէ ազատելով։

Կեցցէ այսպիսի ժողովուրդն, որ ուսման մեծ յարգ կը տայ և մարդասիրութեան մէջ արի կը հանդիսանայ։

digitised by A.R.A.R.@